

ՀՀ ֆինանսների նախարարություն

Հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողով

Ո Ր Ո Շ ՈՒ Մ 30/2

24 հուլիսի 2015 թ.

Քննարկվեց քաղաքացի Սուսաննա Գյոզալյանի 03.07.2015 թ-ի վարչական բողոքը ՀՀ ՖՆ Մաշտոցի ՀՏ պետի 27.05.2015 թ-ի թիվ 1547 որոշման դեմ:

Քաղաքացի Սուսաննա Գյոզալյանի բողոքում բերված փաստարկները.

01.06.2015 թ-ին փոստային առաքման միջոցով քաղաքացի Սուսաննա Գյոզալյանը (այսուհետ նաև բողոքաբեր) ստացել է ՀՀ ֆինանսների նախարարության Մաշտոցի ՀՏ 27.05.2015 թ-ի թիվ 1547 որոշումը (այսուհետ նաև որոշում):

Որոշման համաձայն 27.05.2015 թ-ի դրությամբ բողոքաբերի նկատմամբ առկա են չկատարված հարկային պարտավորություններ ԱԱՀ-ի գծով 2.654.176 դրամի չափով, որից ապառք 1.041.875 դրամ, տույժ 570.426 դրամ և տուգանք 1.041.875 դրամ, որը կատարվել է «ԱԱՀ-ի մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին կետի բ) ենթակետի հիմքով կատարված նախնական հաշվարկի հիման վրա:

Ծանուցումը ստանալուց անմիջապես հետո համապատասխան ՀՏ ներկայացվել են փաստաթղթեր, որոնցից երևում է, որ նշված մեքենաներն բողոքաբերին են անցել ժառանգության իրավունքով ամուսնու մահից հետո: Որից անմիջապես հետո դրանք վաճառվել են, քանի որ այդ մեքենաներն բողոքաբերին անհրաժեշտ չէին, և դրանց պահպանումը կախված կլիներ մեծ դժվարությունների հետ:

Այսուհետև 12.06.2015 թ-ին բողոքաբերը ստացել է երկրորդ նամակը (թիվ 9505, 09.06.2015), որով տեղեկացվել է, որ ժառանգության իրավունքով ավտոմեքենաներն սեփականության իրավունքով անցնելը նույնպես համարվում է ձեռքբերում, և համաձայն օրենքի վերը նշված կետի առաջանում են հարկային պարտավորություններ:

Ելնելով վերոգրյալից՝ Սուսաննա Գյոզալյանը խնդրում է ամբողջությամբ բավարարել վարչական բողոքը՝ անվավեր ճանաչել ՀՀ ֆինանսների նախարարության Մաշտոցի ՀՏ 27.05.2015 թիվ 1547 որոշումը, քանի որ ըստ էության բողոքաբերն ամուսնու՝ Սերգեյ Արաբյանի, իրավահաջորդն է, մեքենաներն իրեն են անցել ժառանգության իրավունքով, և իր կենդանի լինելու և մեքենաները վաճառելու դեպքում նման հարկային պարտավորություններ չէին առաջանա: Այսինքն, հարկային պարտավորություններ չեն կարող առաջանալ նաև իր կողմից դրանք օտարելու դեպքում:

ՀՀ ֆինանսների նախարարության հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովի եզրակացությունը.

ՀՀ ՖՆ հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովը (այսուհետ նաև Հանձնաժողով), ուսումնասիրելով սույն գործին առնչվող նյութերն ու ապացույցները եկավ հետևյալ եզրակացության:

Քննարկման ընթացքում նշվեց, որ ՀՀ ՖՆ Մաշտոցի ՀՏ պետը, քննարկելով քաղաքացի Սուսաննա Գյոզալյանի վերաբերյալ վարչական վարույթի նյութերը

պարզել է, որ 27.05.2015 թ-ի դրությամբ նրա չկատարած հարկային պարտավորությունները ԱԱՀ-ի գծով կազմում են 2.654.176 դրամ, որից ապառք՝ 1.041.875 դրամ, տույժ՝ 570.426 դրամ, տուգանք՝ 1.041.875 դրամ: Նշված պարտավորություններն առաջացել են «ԱԱՀ-ի մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին կետի բ) ենթակետի հիմքով կատարված նախնական հաշվարկի հիման վրա:

Արդյունքում, ղեկավարվելով «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 29.1 հոդվածի և «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 55-րդ, 56-րդ, 58-րդ, 88-րդ հոդվածների դրույթներով ՀՀ ՖՆ Մաշտոցի ՀՏ պետի կողմից 27.05.2015 թ-ին ընդունվել է թիվ 1547 որոշումը (այսուհետ նաև Որոշում) Սուսաննա Գյոզալյանից 2.654.176 դրամ պարտավորության գումար գանձելու վերաբերյալ:

Տվյալ դեպքում հարկային պարտավորությունների հաշվարկման համար հիմք է հանդիսացել այն հանգամանքը, որ ՀՀ Ոստիկանության Ճանապարհային ոստիկանության ծառայությունից ՀՀ ՖՆ Մաշտոցի ՀՏ տեղեկություններ են ստացվել քաղաքացի Սուսաննա Գյոզալյանի կողմից 28.03.2014 թ-ին իրեն սեփականության իրավունքով պատկանող թվով 6 «DAEWOO NEXIA GL 1.5» մակնիշի ավտոմեքենաները վաճառելու վերաբերյալ: Արդյունքում ղեկավարվելով «ԱԱՀ-ի մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին կետի բ) ենթակետի դրույթներով վերոգրյալ ավտոմեքենաների վաճառքը դիտվել է որպես ապրանքների մատակարարում:

Սույն գործում առկա նյութերի և ապացույցների ուսումնասիրությամբ հանձնաժողովը եկավ եզրակացության, որ Որոշումը կայացվել է ՀՀ օրենսդրության պահանջների խախտմամբ, հետևյալ պատճառաբանությամբ:

Համաձայն 11.02.2014 թ-ի «Ըստ օրենքի ժառանգության իրավունքի վկայագրի» և «Սեփականության իրավունքի վկայագրի», վերոգրյալ թվով 6 ավտոմեքենաները քաղաքացի Սուսաննա Գյոզալյանի ամուսնու մահից հետո ժառանգության կարգով անցել են Սուսաննա Գյոզալյանին, որն էլ իրականացրել է դրանց վաճառքը:

Հանձնաժողովը գտնում է, որ քաղաքացի Սուսաննա Գյոզալյանի կողմից վերոգրյալ թվով 6 ավտոմեքենաների վաճառքը «Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի համաձայն չի համարվում ապրանքի մատակարարում, հետևյալ հիմնավորմամբ:

«Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին կետի «բ» ենթակետի համաձայն. «Անհատ ձեռնարկատեր չհանդիսացող ֆիզիկական անձի կողմից իրականացված գործարքները համարվում են ապրանքի մատակարարում հետևյալ դեպքերում՝

...

բ. մեկ օրացուցային տարվա ընթացքում երկու և ավելի թվով անգամ անձի սեփականությունը կամ ընդհանուր սեփականությունը հանդիսացող նույն տեսակի հետևյալ գույքի՝ բնակարանի, առանձնատան (այդ թվում՝ անավարտ (կիսակառույց)), անձնական օգտագործման ավտոմեքենայի, գյուղատնտեսական նշանակության և բնակավայրերի հողերի, ավտոտնակի՝ որևէ ձևով կատարվող հատուցման դիմաց օտարման դեպքերում ապրանքի մատակարարում է համարվում այդ ժամանակահատվածում երկրորդ և ավելի թվով նույն տեսակի գույքի օտարումը, եթե օտարումը կատարվում է տրվյալ գույքի ձեռքբերմանը հաջորդող մեկ տարին չգերազանցող ժամանակահատվածում»:

